

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդվածի՝

1□ 1-ին մասում 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ կետ.

«16□ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու դեպքում:».

2□ 3-րդ մասում 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետ.

«8□ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո դիմելու դեպքում՝ դադարեցնելու օրվանից:».

3□ 4-րդ մասի 1-ին կետում «և 7-րդ» բառերը փոխարինել «, 7-րդ և 8-րդ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասը «մարմիններից» բառից հետո լրացնել «և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված հատուցման հիմնադրամից» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: Չինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուի՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ

գինժառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու դեպքում գինվորական կենսաթոշակ ստանալու նրա իրավունքը դադարեցվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ամսվա 1-ից: